

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Միշա Ղրղոյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23.12.2016թ. թիվ 29 որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ՍԱՐԱՏԱԿ 2016

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն.....
1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում.....
Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԲԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....
 2. Համայնքի տարածքում նախատեսվող (ջարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....
 3. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում.....
 4. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում.....
 5. Համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների, հողամասերի և այլն) կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը
 6. ՀԶԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափերը.....
- Եզրափակում.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտման , ֆինանսական ,տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ , որը նախատեսվում է ռազմավարական քաղականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործնառի իրականացումը :

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի նախկին վարչատարածքի Սարատակ համայնքը հիմնադրվել է 1828 թվականին : Ազգաբնակչության հիմնական մասը տեղափոխվել է Արևմտյան Հայաստանի Բասեն գավառի Կամրջագեղ / Քեռփյուք / գյուղից : 1828 թվականին թուրքերը լցվել են գյուղ և նրանց փաշներից մեկը՝ Ամիրխան անունով , իր խմբով որոշ ժամանակ բնակվել է գյուղում և այդ փաշայի անունով գյուղը անվանվել է Իմիրխան : 1930 թվականին՝ հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը , որը ձգվում է արևելքից արևմուտք 2կմ երկայնքով , այն վերանվանվել է Սարատակ :

Համայնքը առնձնապես հարուստ չէ պատմամշակութային հուշարձներով :

Ներկայումս պահպանվել է 1908 թ. կառուցված եկեղեցու ավերակները , որը ունի վերականգման կարիք : Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն են :

Համայնքն ունի երկհարկանի միջնակարգ դպրոց , մշակույթի տուն , նախադպրոցական հիմնարկ , կապի բաժանմունք :

Համայնքը ակտիվ մասնակցություն է ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմին , Արցախյան ազատամարտին :

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ

2. Սարատակը գտնվում է Արագած լեռան ստորոտում , ծովի մակարդակից 1560մ բարձրության վրա , Արթիկ քաղաքից 10կմ., մարզկենտրոնից 15կմ, մայրաքաղաքից 110 կմ հեռավորության վրա : Աշխարհագրական դիրքը լեռնային է :

3. Տարվա եղանակների բաշխվածությունը անհամաչափ է : Ձմռան տևողությունը մոտ 4 ամիս է և ցուրտ : Խիստ կարճատև է գարունը և ամառը համեմատաբար լավ է աշունը : Տարեկան տեղումների քանակը 1600-1800մմ է : Համայնքը գտնվում է բավականին ակտիվ սեյսմիկ գոտում :

4. Ըստ Հանրապետության տարածքի կադաստրային շրջանցման , գյուղը գտնվում է Հրազդան - Սպիտակ գնահատման շրջանում , իսկ ագրո- կլիմայական շրջանցմամբ՝ Շիրակի չափավոր ցուրտ , խոնավությամբ թույլ ապահոված գոտում :

5. Համայնքը հյուսիսից սահմանակից է Ախուրյանի տարածաշրջանի Այգաբաց , Բենիամին , արևելքից Վարդաքար , Հովտաշեն , հարավից Հոռոմ , հարավարևմուտքից Լուսակերտ համայնքների վարչական տարածքներին :

6. Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ , որը հանդիսանում է նրանց եկամուտի աղբյուրը : Մեծ է նաև արտագնա աշխտանքի մեկնողների թիվը :

7.

3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2016թ. հունվարի 1-ի տվյալներով համայնքում հաշվառված բնակչության թիվը կազմում է 1470մարդ (410 ծուխ) որից՝ տղամարդ -710, կանայք -760

Ստորև ներկայացվում է Սարատակ համայնքի ժողովրդագրության բնութագիրն ըստ կարևորագույն ցուցանիշների / 2017-2021թթ./

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ / ըստ տարիների /	ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ		ՏՂԱՍՐԴ	0-6 տ.	6-16 տ.	16-60 տ.	60-բարձր	Բարձրագույն	Թերի բարձր	Միջն , մասն	Միջնակարգ	Ութնամյա	Տարրական	Աշխատող	Գործազուրկ	Թռչակառու	Նպաստառու	Փախստական	Ծնողազուրկ	Հաշմանդան	Արտակա	
	2017	2021																				
Բնակչության սեռատարիքային բաշխում	2017	760	710	133	251	885	201															
	2018																					
	2019																					
	2020																					
	2021	710	760	133	251	885	201															
Բնակչության բաշխումը ըստ կրթական մակարդակի	2017							118	3	161	253	27	20									
	2018																					
	2019																					
	2020																					
	2021							130	5	186	260	30	23									
Զբաղվածությունը	2017													80	50							
	2018																					
	2019																					
	2020																					
	2021													82	100							
Բնակչության բաշխվածության նկարագիրը	2017															204	90	--	10	10	4	
	2018																					
	2019																					
	2020																					
	2021															180	83	---	12	13	5	

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՏԱՐԻՆԵՐ				
	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
1 Բնակչության թիվը տարեսկզբին	1456				1470
2 Տնտեսությունների թիվը	380				380
3 Ժամանակավոր բացակայողներ	410				410
4 Ժամանակավոր հաշվառվածներ					
5 Ծնունդ					
6 Մահ					

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Գյուղատնտեսության գնահատականը

Համայնքում գյուղատնտեսությունը իրականացվում է հողագործության և անասնապահության տեսքով լեռնային բնակլիմայական և մշակման ագրոտեխնիկական պայմաններին բնորոշ ձևերով : Համայնքին բնորոշ մշակվող գյուղատնտեսական կուլտուրաներն են կարտոֆիլը , կաղամբը և հացահատիկային կուլտուրաները : Հողագործությունը իրականացվում է անհատական տնտեսությունների միջոցով , սեփականաշնորհված և վարձակալված հողամասերում : Համայնքի հողային հաշվեկշիռը ունի հետևյալ տեսքը`

1Ըստ հողատեսքերի

❖ Գյուղ . նշանակության / վարելահող / , որից` սեփականաշնորհված հողատեսք / վարելահող	645,2 հա 574,0 հա
❖ Տնամերձ հողատեսք	101,8 հա
❖ Սեփականաշնորհված հողատեսք / խոտհարք /	-----
❖ Արոտավայր / գյուղամերձ /	28 հա
❖ Արոտավայր / հեռագնա /	214,4 հա
❖ Բնակավայրի տարածք	117,4հա
❖ Համայնքային սեփականության պահուստային ֆոնդի հողեր	67 հա
Ընդամենը	1032,9

Սեփականաշնորհված մեկ հողաբաժնի չափը -1,20 հա
Սեփականաշնորհումից չօգտված ընտանիքներ 4
Գյուղացիական տնտեսություններ -290

- Տրակտորներ` որից
անվավոր 5 հատ
թրթուրավոր 1 հատ
- Կոմբայներ - 4
- Բեռնատար ավտոմեքենաներ - 10 հատ
- Մարդատար ավտոմեքենաներ 90 հատ
Անասնապահություն , որից`

- խոշոր եղջերավոր անասուններ --856
- մանր եղջերավոր անասուններ -453
- խոզեր 67
- մեղվաընտանիքներ -50
- բանող անասուններ / ձիեր / - 2
- թռչուններ - 1500

Համայնքում արտադրված գյուղատնտեսական ապրանքները հիմնականում իրացվում են համայնքում , հարակից գյուղերում , Գյումրի , Արթիկ և Երևան քաղաքներում

Գրադարանը տեղակայված է Մշակույթի տան շենքի առաջին հարկում, ունի մոտ 6000կտոր գրքային ֆոնդ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքի տարածքում գործում է <Հոռոմի բժշկական ամբուլատորիա> ՊՓԲԸ-ի, Սարատակի գյուղապետարանի շենքում տեղակայված բուժականկաբարձական կետը, որտեղ աշխատում են երկու բուժույրեր:Կաբինետն ապահովված է խմելու ջրով, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով:

Մարատակի միջնակարգ դպրոցում գործում են մարզադահլիճը և խաղահրապարակը՝ ֆուտբոլի դաշտով, որոնցից, բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև երիտասարդները: Գյուղի մշակույթի տան շենքում գործում է պարի խմբակ, որի ֆինանսավորումը կատարվում է համայնքի բյուջեից:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի տարածքում կան հանգստի գոտիներ և գեղեցիկ հուշադրություններ, որտեղ համայնքի բնակիչները իրենց հանգիստը:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 780 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են միայն 560-ը, աշխատանք չունեն 220-ը:

Համայնքի մոտ 410 ընտանիքներից 130-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 88 ընտանիքները (ընդհանուրի մոտ 21 %-ը): Համայնքում բնակվում են նաև 52 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 30 երեխա:

Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալառողջապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Արթիկի ՄՕՏԳ-ի (պետական պատվերի շրջանակներում) և գյուղապետարանի կողմից:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում վերջին տարիների ընթացքում նկատելի էր որոշակի դրական տեղաշարժ նախկին համայնքների ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքի Մշակույթի տանը կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է: Ավագանու որոշմամբ ստեղծվել է աղետների դեպքում համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովը, հաստատվել է բնակչության տարահանման գործողությունների պլանը:

5.3 ԱՄՍՅՆՔԻ ԿՈՍՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՀԱՍՎԱՐԳԵՐԸ

Սարատակ համայնքը ունի կոմունիկացիոն հետևյալ համակարգերը՝

- ✓ ճանապարհային ցանց
- ✓ Կամուրջներ 4 հատ
- ✓ Խմելու ջրի ներտնտեսային ցանց
- ✓ Ոռոգման ջրի ներտնտեսային ցանց
- ✓ Կապ

▪ **ճանապարհային ցանց.**

Սարատակի ներհամայնքային ճանապարհային ցանցի երկարությունն է 4.5 կմ , որը ամբողջությամբ գրունտային ծածկույթ է : 2.5 կմ հատվածը ունի բարեկարգման կարիք :

▪ **Կամուրջներ**

Համայնքի հաշվեկշռում կա 4 կամուրջ , որից 1-ը երկաթբետոնից են , կառուցված են հեղեղատարների հունների վրա և ունեն վերանորոգման կարիք : անհրաժեշտություն կա կառուցել ևս մեկ կամուրջ , որը իրար կմիացնի համայնքի երկու թաղամասեր :

▪ Խմելու ջրի ներտնտեսային ցանց

Սարատակ համայնքը խմելու ջուրը ստանում է Ղազանչիի աղբյուրներից : Ջրամատակարարման համակարգը 15 կմ է : Անխափան ջրամատակարարում ապահովելու համար անհրաժեշտություն կա վերանորոգել 3 կմ և կառուցելու նոր 2 կմ հատվածներ :

▪ **Ոռոգման ջրի ներտնտեսային ցանց**

Սարատակ համայնքը ոռոգման ջուրը ստանում է Վարդաքարի ջրամբարից , բաց համակարգի միջոցով : Ջրամատակարարման համակարգը 7 կմ է : Անկորուստ ոռոգում ապահովելու համար անհրաժեշ է համակարգը դարձնել փակ : Ներտնտեսային ցանցը ամբողջությամբ հողային առուներ են , որի պատճառով տեղի է ունենում ջրի 55-60 % կորուստ :

▪ **Կապ**

Համայնքի հեռախոսակապը իրականացվում է Արթիկի ԱՅԿ միջոցով , բաժանորդների թիվը կազմում է 300 ընտանիք :


Համայնքում գործում է նաև « Հայփոստ ի » մասնաճյուղը , իր առանձին շենքով :

7. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐԸ	ՔԱՆԱԿ	ՀԱՇՎԵԿՇՈԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ	ՓԱՍՏԱՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ Է
1	Գյուղապ. վարչակ. շենք	հատ	1	3.462.000	Շահագործվում է
2	Մշակույթի տուն	հատ	1	6.900.150	Վթարային շահագ. մասն.
3	« Դարինդարա »	հատ	1	286.868	Գտնվում է թալանված վիճակում
4	Գազի ներտնտ.ցանց			3.588.321	շահագործվում է
5	Գերեզմանոց		1	3.142.800	շահագործվում է
6	Ներհամայնքային ճան.		4.5կմ		

8 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Տեղական ինքնակառավարումը համայնքում իրականացվում է համայնքի ղեկավարի և ավագանու միջոցով :
 Համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 9 աշխատակիցներից , համայնքի ավագանին ` 7 անդամներից :



Տեղեկությունների համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատակիցների վերաբերյալ

Զ/Զ	Անուն , ազգանուն	զբաղեցրած պաշտոնը	Կրթութ.	Մասնագիտ.	Ծննդյան տարեթիվ
1	Դրզոյան Սիշա Ս.	Համ. ղեկավար	միջն. մասն.	գյուղատնտ.	1960թ.
2	Վիրաբյան Արայիկ Ս.	համայնքի ղեկավարի տեղակալ	միջն. մասն.	Ավտոմ.շահագ.	1963թ.
3	Քարտաշյան Կարինե	Աշխ . քարտ.	Բարձր.	մանկավարժ	1960թ.
4	Մանանդյան Նելլի Գ.	1-ին կարգի մասնագետ	Բարձրագույն		1962թ.
5	Հակոբյան Հովհաննես Վ.	ԴՀԱՀԻՄԻ ղեկավարի օգնական	միջն. մասն.		1961թ.
6	Մովսիսյան Մովսես Հ.	երկրորդ կարգի մասնագետ	միջն.		1976թ.
7	Մարտիրոսյան Սուսաննա			մշակույթի տան տնօրեն	1957թ.
8	Մինասյան Վարդուհի		Միջն.	Գործավար-քարտուղարուհի	1996թ.
9	Մարտիրոսյան Հասմիկ			Պահակ	1962թ.

Համառոտ տեղեկություններ համայնքի ավագանու մասին

Սարատակ համայնքի ավագանին ընտրվել է 2016թ. հոկտեմբերի 2-ին , կազմված է 7 անդամից :

Զ/Զ	Անուն , ազգանուն	Ծննդյան տարեթիվը	Կրթությունը	Մասնագիտությունը
1	Հակոբյան Արթուր Հ.	1991թ.		
2	Ղզրոյան Մերուժան Մ.	1966թ.	միջն.	
3	Աթոյան Վահրամ Վ.	1973թ.	միջն.	
4	Զատիկյան Վահրամ	1984թ.	միջն.	
5	Մանուկյան Ռուբեն Շ.	1973թ.	միջն.	
6	Եղիկյան Ալբերտ Ա.	1983թ.	բարձրագույն	
7	Փիլոսյան Վահրամ Ա.	1952թ.	միջն.	

9. Համայնքի ուժեղ կողմերը

--- Գյուղատնտեսական տեխնիկայի բավարար քանակը

- Համայնքում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների մեծ քանակը :
- Գյուլմրի- Երևան հանրապետական նշանակության ավտոճանապարհին , մարզկենտրոնին մոտ գտնվելը
- Մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի բավական բարձր որակը
- Կրթական հաստատությունների շենքային բարվոք վիճակը

10. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ոռոգման ներքին ցանցի վատ վիճակը

Ազգաբնակչության սոցիալ – տնտեսական պայմանների ցածր մակարդակը

Աշխատատեղերի բացակայությունը

Խմելու ջրի մատակարարման ցանցի վատ վիճակը

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բարելավել բնակչության սոցիալ – տնտեսական պայմանները , գյուղը դարձնել բարեկարգ , մաքուր բնակավայր :

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ա/ ք/ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և վերանորոգում

բ/ Միջնակարգ դպրոցի գազաֆիկացում

գ/ Երկրորդ համաշխարհային պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհված համագյուղացիների հիշատակին նվիրված հուշարձանի տարածքի բարեկարգում :

դ/ Բուժ . կետի առանձին շենքի կառուցում

ե/ Ոռոգման ցանցի վերանորոգում

12.ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՐՈՆԵՐԻ ԱՌԱՋՆԱԴՅԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ » ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծ Ր Ա Գ Ի Ր 1

Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և կառուցում
Նպատակ՝ համայնքի բոլոր ճանապարհները դարձնել անցանելի, ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար երթևեկության բավարար պայմաններ:

Խնդիր 1

2017-2021թ. համայնքի, պետ բյուջեի աջակցությամբ և միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներով իրականացնել, երկրորդական ճանապարհների 2, 5 կմ հատվածի վերանորոգում և բարեկարգում:
պատասխանատու համայնքի ղեկավար

Ծ Ր Ա Գ Ի Ր 2

Միջնակարգ դպրոցի գազաֆիկացում
Նպատակ՝ համայնքի միջնակարգ դպրոցի գազաֆիկացում և ջեռուցման անցկացում

Խնդիր 1

Մինչև 2021 թ. վերջը պետ. բյուջեի համայնքի անհրաժեշտ ներդրումների և անհատ բարերարների միջոցներով իրականացնել համայնքի միջն. դպրոցի գազաֆիկացումը և ջեռուցման անցկացումը:

պատասխանատու համայնքի ղեկավարի տեղակալ

Ծ Ր Ա Գ Ի Ր 3

Ներհամայնքային ճանապարհների լուսավորության ցանցի կառուցում

Նպատակ՝ Ներհամայնքային առաջնային և երկրորդական ճանապարհների լուսավորության ցանցի երկաթյա սյուների վրա տեղափխում:

պատասխանատու գյուղապետարան

Խնդիր `1

2017-20201թ.թ. ընթացքում համայնքի բյուջեր միջոցներով և «ՎՅԱ» ծրագրով իրականացնել համայնքի առաջնային և երկրորդական ճանապարհների լուսավորության ցանցի երկաթյա սյուների վրա տեղափխում:

պատասխանատու գյուղապետարան

ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը : ՀՀ Շիրակի մարզի Սարատակի համայնքում այն ունի հետևյալ պատկերը :

Դ/Դ	ԵԿԱՍՈՒՏԻ ՏԵՍԱԿԸ	Հազար դրամ				
		Կանխատեսում				
		2017	2018	2019	2020	2021
1	Հարկային եկամուտներ ու տուրքեր	7609.0	7740.0	7915.0	8010.0	8100.0
2	Հողի հարկ	3599.0	3600.0	3620.0	3650.0	3690.0
3	Գույքահարկ ընդամենը	3978.0	4100.0	4250.0	4300.0	4350.0
4	Տեղական տուրքեր	32.0	40.0	45.0	60.0	60.0
5	Ոչ հարկային եկամուտներ	2345.0	2345.0	2345.0	2345.0	2345.0
6	Հողի վարձակալություն	2345.0	2345.0	2345.0	2345.0	2345.0
7	Գույքի վարձակալություն	-----	----	-----	-----	
8	Պաշտոնական տրանսֆերներ՝ դոտացիա	22975.8	22975.8	23550.0	23550.0	23550.0
9	Տարեսկզբի ազատ մնացորդ	36.1	100.0	150.0	250.0	300.0
10	Եկամուտներ ընդամենը	32965.1	33160.0	33960.0	34155.0	24295.0

Հողի հարկի և գույքահարկի գանձման արդյունավետության բարձրացման նպատակով կազմել հատուկ ժամանակացույց : Եկամուտների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիր , որը նպատակաուղղված լինի համայնքի հնգամյա զարգացմանը :

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Սարատակ համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող համայնք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,

- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- ՏԻ-անը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ՏԻ-անը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներում պայմանների ընդլայնում և բարելավում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,

- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցի շենքի նորոգման և ջեռուցման, ներքին հարդարման, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերի, մանկապարտեզների, մշակույթի տների և ակումբների, գրադարանների, բուժկետերի) շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թ.թ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Մարատակի մանկապարտեզի շենքի, տանիքի վերանորոգում:
- Համայնքի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելով ,Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ին:

2017-2021թ.թ. ընթացքում Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների և (կամ) միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ՀՏԶՀ-ի հետ՝ ,Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և սպասարկման, աղբահանության ծառայությունների ստեղծում, ներհամայնքային հասարակական տրանսպորտի համակարգի ձևավորում, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ագրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածումն ծրագիրը:

Ե Ձ Ր Ա Փ Ա Կ ՈՒ Մ

ՀՀ Շիրակի մարզի Սարատակ համայնքի 2017-2021թ.թ. հնգամյա ծրագիրը կազմված է՝ հաշվի առնելով տեղական բյուջեի եկամուտները , ինչպես նաև պետական բյուջեից կատարվող հատկացումները :

Ծրագրում տեղ են գտել համայնքի համար մի շարք կարևորագույն խնդիրներ , որոնց իրականացման համար անհրաժեշտ է պետական աջակցություն , որի համար կան որոշակի ակնկալիքներ : Կարևորվում է նաև առանձին հիմնադրամների հետ համագործակցությունը :

Համայնքի ղեկավարի աշխատակազմը պետք է անհրաժեշտ աշխատանքներ կատարի ապահովելու սեփական եկամուտները , գտնելու նոր եկամտի աղբյուրներ համայնքի առջև ծառայած հիմնախնդիրները լուծելու համար :

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը կազմված է օգտագործելով ՀՄՆՀ աջակցությամբ ՄՁՄԿ -ի կողմից իրականացված « Տեղական ինքնակառավարման մարմինների ուսուցման » ծրագրի նյութերը :